տուն է որուն կ'երկրպագէ միշտ ։

Էմմէ Մոլբէն Թարգ.

Զաքար Մ. Համբարձումեան,

Ուխտաւոր ։ յԵրուսաղէմ ։

## ԲԴԵՇԽ ՄԸ ԵՒ ԵՐԵՔ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Ժամանակին Երուսաղէմայ Բդեշխին երեք բարեկամներ ունէր. առաջինը չափազանց կը սիրէր. երկրորդը սակաւ, երրորդը՝ երբեմն երբեմն ։

Օր մը Թագաւորը հաշիւ ուզեց այս Բդեշխէն. նա ալ պատրաստութիւն սկսաւ տեսնել. մեկնելու միջոցին, առաջին բարեկամը տեղէն չը շարժեցաւ և անհոգ էր իր սիրելոյն վրայ ։ Երկրորդը մինչև Յոպպէ գնաց նաւահանգիստը և զինք նաւ դնելէն յետոյ տեղը դարձաւ ։ Երրորդը, որ երբեմն երբեմն կը սիրէր և հազիւ իր միտքէն կ'անցնէր, իր հետը նաւը նըստաւ գնաց Թագաւորին առաջքը և զինք արդարացնելով ազատեց դատապարտութենէն ։

Սոյն պատմութենէն կարող ենք հետեւեալ բարոյականը հանել:

Թագաւորը՝ Աստուած է, Բդեշխը՝ մարդն է. երեք բարեկամներէն առաջին բարեկամը՝ ոսկի. երկրորդը ազգականն և նման մարդիկ. երրորդը առաքինութիւն և բարի գործ. ոսկին որ տեղէն չը շարժիր. ազգականները զայն մինչև գերեզման կը տանին և թաղելէն յետոյ յետ կը դառնան. իսկ առաքինութիւնը մինչև Աստուծոյ դատաստանին առջևը կ'ելլէ զայն կ'արդարացնէ Թագաւորին յաւիտենական դատապարտութենէն և երկինք մըշտընջենաւոր փառաց ժառանգորդ կ'ընէ ։ Ուրեմն այս աշխարհիս վրայ մարդուս ամենէն հաւատարիմ և անձնանուէր բարեկամը առաքինութիւնն է. ով որ առաքինութեան զրահներով պատէրուած է, թող անվեհեր դիմէ աշխարհիս փորձանաց մէջ. նա յաղթական է. զի Աստուած առաքինեաց սրտին մէջ կը բնակի. երջանկութիւն և արքայութիւն առաքինեաց ետեւէն կը վազեն. Երանի անոնց, որ առաքինական գործքերով Աստուծոյ հաճոյ կ'ըլլան. նոցա համար փառք աշխարհիս և ճոխութիւն սնոտիք են. նոցա համար յերկինս պատրաստուած է փառաց և անմահութեան անթարշամ դափնին ։

1874 Նիկողայոս Ց.

Դեկտեմբեր 25 Թօգօբլեանց ։

## ՄԱՂԱՔԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ

Ս. Աթոռոյս Միաբան և Բաբիլոնի առաջնորդ Արժ. Մաղաքիա վարդապետի աշակերտներէն կողոպտելուն վերայ Ազգային լրագիրք սմանք տարբեր լուրեր հրատարակեցին, մեք իրողութիւնն իւր ստուգութեամբ ներկայնելու համար՝ արժան կը դատենք նոյն իսկ Մաղաքիա վարդապետի նամակն հրատարակել ։

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Նոյեմբեր 16 ին Ձեր բարձր Սրբազնութեան աղօթիւք ողջամբ ժամանեցի ՚ի Տիգրանակերտ, բայց ոչ առանց

digitised by A.R.A.R.@